ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«05» 03 2015 թ.

<Հ - 313

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 2015 թվականի փետրվարի 12-ի թիվ 02/12.11/1957-15 գրության՝ Ձեզ ենք ուղարկում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի եզրակացությունը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-6627
05 03 2015թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ օգնության ցուցաբերման խմբերի թվին է դասվում նաև զինվորական անձնակազմը: Նշվածը հակասում է «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում ամրագրված այն դրույթին, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը օտարերկրյա պետություններ խաղաղապահ կամ այլ նպատակներով ուղարկելու, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների ռազմական բազաներ ստեղծելու կամ օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների զինված ուժեր Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունելու, տեղակայելու, միջազգային վեճեր լուծելու, զինաթափման, ռազմական պարտավորություններ ստանձնելու, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության հարցեր շոշափող այլ հարաբերությունները կարգավորվում են *միայն միջպետական պայմանագրերով*:
2. Առաջարկում ենք խմբագրել նախագծի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված դրույթները՝ սահմանելով, որ օգնությունը ցուցաբերվում է անհատույց կարգով, եթե կողմերը չեն եկել այլ համաձայնության:
3. Նախագծի 17-րդ հոդվածում ամրագրված այն մոտեցումը, որ «հարցում կատարող կողմը օգնություն տրամադրող կողմին չի մեղադրում մարդկանց

զոհվելու կամ նրանց վնասվածքներ ստանալու համար», ընդունելի չէ: Տվյալ դրույթից հետևում է, որ օգնության ցուցաբերման խմբերի անդամների կողմից նույնիսկ դիտավորյալ գործողություններ կատարելը, որոնց արդյունքում առաջանում է անձի մահ, իրավական հետևանքներ չեն կարող առաջացնել (բացի նյութական փոխհատուցումից): Նշված մոտեցումը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի հիմնարար՝ օրենքի առջև հավասարության և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքներին, և չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով ամրագրված՝ անձի կյանքի իրավունքի իրացման համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծելու պետության պարտականությանը:

4. Առաջարկում ենք 17-րդ հոդվածը խմբագրել այնպես, որ տրամադրող կողմը փոխհատուցի օգնության ցուցաբերման խմբի անդամի կողմից պատճառված վնասը հարցում կատարող կողմի օրենսդրությանը համապատասխան՝ անկախ մեղքի ձևից:
5. Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության, համաձայնագիրը կարող է Հայաստանի Հանրապետության համար առաջացնել լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ: Հաշվի առնելով նշվածը՝ անհրաժեշտ է լուծում տալ տվյալ հարցին՝ պայմանագրի հետագա ներպետական ընթացակարգերը որոշակիացնելու նպատակով: